Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения молодых учёных и специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

5/2014

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

(периодический сборник научных статей)

ARMENOLOGY RESEARCHES

(periodical collection of scientific articles)

Ստեփանակերտ - 2015

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԻՆ (1991-1994 թթ.)[1]

Իսկուհի Ավանեսյան
Ասպիրանտ
ԱրՊՀ

Բանալի բառեր *- կանայք, համազգային, ինքնապաշտպանություն, նպաստել, պայքար, ազատագրում, անկախություն, հաղթանակ, վիրավորներ, զոհեր:*

1991թ.՝ ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում, ԽՍՀՄ օրենսդրության պահանջներին և միջազգային իրավական նորմերին համապատասխան, նախկին Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարածքում ստեղծվեց երկու պետություն՝ Ադրբեջանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

1991 թվականի սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում՝ բոլոր մակարդակների ժողովրդական պատգամավորների մասնակցությամբ, տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան, որտեղ ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»[2]: Հռչակագրի ընդունմամբ արցախահայությունը վերահաստատեց ազատության համար մինչև վերջ պայքարելու իր վճռականությունը: Կենտրոնը լռելյայն ընդունեց սեպտեմբերի 2-ի որոշումը, և դա պատահական չէր, որովհետև իրավական տեսանկյունից այն անթերի էր ու սահմանադրական: Արցախահայության պետականության վերականգնման ճանապարհին հերթական կարևոր քայլ հանդիսացավ -1991թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպված հանրաքվեն, որի ժամանակ հարցման ենթարկվածների 99,89 տոկոսն արտահայտվեց ԼՂՀ հռչակման օգտին[3]:

Ադրբեջանի ղեկավարությունն իրողությունն ընդունեց սրերով: Արհամարհելով իրավական և քաղաքական իրողությունը՝ Ադրբեջանը 1991թ. նոյեմբերից լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց նորահռչակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ՝ նպատակ ունե-

---

[1] *Հոդվածը ընդունված է 20.10.14:*
[2] *«Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի, 1991:*
[3] *Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականության պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 302:*

նալով ոչ միայն ճնշելու նախկին ինքնավար մարզում իրավական առումով որակապես նոր փուլ թևակոխած ազգային-ազատագրական պայքարը, այլև, ինչպես նաև իրականացնելու հայ ազգաբնակչությանը բռնի տեղահանումը: Օրեցօր ավելի ու ավելի ծավալվող ռազմական գործողությունների պարտադրանքով օրախնդիր դարձավ ԼՂՀ-ում պաշտպանական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Այդ ուղղությամբ ձեռնարկվող կազմակերպական միջոցները նպատակասլաց, հետևողականորեն իրականացվում էին Հայաստանում և Արցախում համաժամանակ: Արդյունքում՝ մարտական գործողություններին զուգահեռ, սկսեցին կազմավորվել ՀՀ Զինված ուժերը և ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը (հետագայում՝ ԼՂՀ Պաշտպանության բանակը):

1991թ. վերջերին և 1992թ. սկզբներին ԼՂՀ տարածքում կազմավորվեցին 10-ից ավելի վաշտեր ու դասակներ:[1] Դա հնարավորություն տվեց հակամարտ ուժերի անհավասարության պայմաններում անհամեմատ կազմակերպված իրականացնել Արցախի ինքնապաշտպանական մարտերը:

Հետզհետե թափ առնող ռազմական գործողություններին սկսեցին անմիջական մասնակցություն ունենալ նաև Արցախցի և Հայաստանի Հանրապետությունից հարյուրավոր կին-կամավորականներ: Մասնակցելով ինքնապաշտպանական մարտերին, կանայք տղամարդ զինվորների հետ միասին կիսում էին պատերազմի անասելի դժվարությունները, ապացուցելով, որ իրենց մեջ ապրում է անվեհեր կին ֆիդայու՝ լեգենդար Սոսեի ոգին:

Հիշենք, որ հայ ժողովրդի բազմադարյա պատմության ընթացքում չի եղել որևէ ճակատագրական իրադարձություն, երբ հայ տղամարդու կողքին կանգնած չլիներ հայ կինը: Մեծն Նժդեհն է ասել. «Մայրերի ափերի մեջ պիտի փնտրել ազգի ճակատագիրը»[2]:

Անգնահատելի էր Արցախյան ազատամարտում հայ կնոջ դերը: Դեռևս 1988-1989թթ. հանրահավաքների ժամանակ կամավորական ջոկատներին զինվորագրվելու և ճակատ մեկնելու կոչերին ակտիվորեն արձագանքում էին կանայք՝ համարելով, որ այդ ճակատագրական պահին իրենք ևս պարտավոր են կատարել իրենց պարտքը հայրենիքի առջև, և տեղին է ասել, որ 1991-1994թթ. պատերազմական շրջանում հայ

[1] Հասրաթյան Մ., Ղարաբաղյան պատերազմ, Երևան 2001թ., էջ 27:
[2] Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000, հատոր Գ. 2007թ, էջ՝576

կանայք ուրույն տեղ ու դեր ունեցան ազատամարտիկների շարքերում: Նրանցից շատերը կամավոր մեկնելով ռազմաճակատ, մասնակցեցին մարտական գործողություններին, ինչպես նաև մարտադաշտից վիրավորների տեղահանման ու բուժսպասարկման աշխատանքներին: Հարկ է նշել, որ հայ կինը Արցախյան գոյապայքարում իրեն պատասխանատու էր զգում վտանգված հայրենիքի համար:

Այդպիսին էր նաև Սիրանուշ Առուշանյանը (Աքա): 1989թ., անդամագրվելով Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի «Փառանձեմ» կամավորական ջոկատին, նա մինչև զինադադար մասնակցեց մարտական գործողություններին՝ առաջին օրվանից կատարելով ամենատարբեր առաջադրանքներ: Ժամապահ էր, հետախույզ, առաջին գծում մարտնչող ռազմիկ:

1992թ. ամռանն ադրբեջանական ուժերն անցան լայնածավալ հարձակման: Մարտերն ընթանում էին փոփոխական հաջողություններով: Հայկական ուժերը, Հաթերքը կորցնելուց հետո, ստիպված էին ամրանալ Կիչանում: Այդ ծանր օրերին Սիրանուշ Առուշանյանը Հաթերքի ջոկատի հիման վրա կազմավորված ստորաբաժանման հետ էր: 1993-ի ձմռանն ինքնապաշտպանության ջոկատները կարողացան որոշակի դիրքային հավասարակշռություն ստեղծել և անցնել հակահարձակման: Հաթերքի ստորաբաժանումը մասնակցեց Մարտակերտի գյուղերի ազատագրմանը: Հետագայում Սիրանուշ Առուշանյանը գնդի կազմում մասնակցեց 1993թ. փետրվարին Մարտակերտի վերին ձորակի՝ Դրմբոն, Վերին Հոռաթաղ, Հարությունագոմեր, Վաղուհաս, Չլդրան, Զարդախաչ, Հաթերք, Զագլիկ, Ումութլու գյուղերի ազատագրմանը: Նա որպես մարտիկ ակտիվորեն մասնակցում էր բոլոր մարտերին, իր համառությամբ, նվիրվածությամբ ոգեշնչում մարտական ընկերներին: Մարտական գործողությունների ընթացքում երեք անգամ վիրավորվեց, սակայն երկամսյա բուժումից հետո կրկին շարք վերադարձավ և մասնակցեց հայկական զինուժի հաղթարշավին:[1]

Յուրաքանչյուր պատերազմում ի հայտ են գալիս վառ անհատականություններ, որոնք դառնում են այդ պատերազմի խորհրդանիշները:

---

[1] *Վարդումյան Հ., Աստվածների կանչը, Երևան, 2004., էջ48: Սիրանուշ Առուշանյանը 1988-ից սկսած կապ հաստատելով Երևանում շարժման մասնակիցների հետ, սկսեց գենք, զինամթերք տեղափոխել Երևանից Ստեփանակերտ: Այնուհետև, ընդգրկվելով «Փառանձեմ» ջոկատի մեջ, մասնակցեց 1991թ. «Օղակ» գործողության ժամանակ՝39 հոգուց բաղկացած խորհրդային մի կորաջոկատի գերեվարմանը:*

Արցախյան պատերազմն այդ առումով բացառություն չէր: Այդպիսի անհատականություն դարձավ նաև ղարաբաղյան շարժման գործիչ Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի Ժաննա Գալստյանը: Լինելով արցախահայության ազգային-ազատագրական շարժման նվիրյալներից մեկը, մասնակցել է գոյամարտի գրեթե բոլոր կարևոր ռազմագործողություններին: 1991թ. նա համակարգող խմբի մի քանի անդամների հետ միասին շրջում էր շրջանները, հանդիպումներ ունենում կամավորական ջոկատների հրամանատարներ հետ, աշխատում ուժերը միավորել մեկ բանակային կառույցի մեջ և զորակոչ կազմակերպել:

1992թ. ամռանն ռազմական իրավիճակը կտրուկ սրվել էր: Այդ ժամանակահատվածում էր, որ Ժաննա Գալստյանը նշանակվեց գնդի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ[1]: Կազմակերպչական աշխատանքներին զուգահեռ նա զենքը ձեռքին մարտնչում էր որպես զինվոր՝ Բերդաձորում, Մարտակերտում, Հաթերքում, Կիչանում, մարտական գործողությունների մյուս թեժ կետերում

Արցախյան ազատամարտում իր զգալի ներդրումն ուներ նաև աշխարհազորային Հայոց ազգային բանակը՝ ՀԱԲ-ը (գործել է 1989-1990թթ.), որի շարքերը համալրած կանայք (Զեմֆիրա Միլիտոնյան, Արևհատ Մարտիրոսյան) ոչ միայն որպես շարքային զինվորներ մասնակցել են ռազմական միավորման վարած մարտական գործողություններին՝ ՀՀ Արարատի (Երասխ), Իջևանի Նոյեմբերյանի, Վարդենիսի, Սիսիանի ինքնապաշտպանական մարտերին, այլև զբաղեցրել հրամանատարական պաշտոններ (1990թ. ՀԱԲ-ի հրամանատարի տեղակալ՝ Զուլիետա Գյունաշյան): ՀԱԲ-ի լուծարվելուց հետո կանայք ներգրավվել են տարբեր կամավորական ջոկատների կազմեր և մասնակցել ԼՂՀ-ում ընթացող ռազմական գործողություններին[2]:

1992թ. ծանր օրերին ստեղծվեց նաև կանանց վաշտ: 1992թ. «Սպիտակ» փրկարարների խմբի բժիշկների ուժերով կազմակերպվեցին առաջին բուժօգնության դասընթացները, որն ավարտելուց հետո 24 հոգուց բաղկացած խումբը Շուշիի ուսումնական կենտրոնում անցավ

---

[1] *Նույն տեղում. էջ 67: Դեռևս 1988-ին Ժ. Գալստյանը ընդգրկված էր՝ շարժման նախաձեռնող խմբի մեջ և ժողովրդական հուզումներին ընթացք տալու համար ակտիվ մասնակցություն էր ունենում ցույցերի, հանրահավաքների կազմակերպմանը, ինչպես նաև ընդգրկվում Մոսկվա մեկնող պատվիրակության կազմում:*

[2] *«Լուսարար», թիվ 32-33, հունվարի 30, 2011:*

նախնական զինվորական պատրաստվածության: Սակայն կանանց գումարտակ չկազմավորվեց: 1992 թվականի դեկտեմբերին ինը հոգուց բաղկացած խումբը (Մարգարիտա Սարգսյան, Կարինե Դանիելյան, Եվգենյա Առստամյան, Գայանե Առստամյան, Անահիտ Պետրոսյան, Անահիտ Թամրազյան, Վարդուհի Գևորգյան, Մարգարիտա Թառանյան, Արեգա Սարգսյան) մտավ 8-րդ վաշտի կազմ: Նրանք որպես բուժքույր-ազատամարտիկ մասնակցեցին Արցախի տարբեր շրջանների ազատագրական և ինքնապաշտպանական մարտերին: Նրանց մարտական հաշվի մեջ գրանցվեցին տասնյակ թշնամական կյանքեր և տասնյակ հայ մարտիկների փրկված կյանքեր: Ընդգրկվելով Շուշիի գնդի կազմ, նրանք անցան ողջ պատերազմը: Հետագայում այդ վաշտի հիման վրա ստեղծվեց 5-րդ գումարտակը:

Նույնիսկ զինադադարի հաստատումից հետո մասնակցեցին Կարմիրավանի համար մղվող վերջին մարտերին[1]:

Կանանց վաշտը, գտնվելով ռազմաճակատի առաջնային գծում, դիմակայեց թշնամուն և հաղթահարեց բոլոր դժվարությունները: Վաշտը Շուշիի 8-րդ մոտոհրաձգային գումարտակի կազմում մասնակցեց Լաչինի (Իփյակ, Թազաքենդ), Մարտակերտի (Դրմբոն, Գետավան, Չլդրան, Կիչան, Կարմիրավան), Հադրութի (Խծաբերդ), Ֆիզուլիի (Հորադիզ), Ղուբաթլուի, Աղդամի (Բոյահմեդլի, Սոֆուլու) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին, որի ընթացքում ունեցավ զոհ (Մարգարիտա Սարգսյան) և վիրավորներ (Կարինե Դանիելյան, Եվգենյա Առստամյան):[2]

Կանայք ամենուրեք կամավորագրվում էին ԼՂՀ-ի և ՀՀ-ի ինքնապաշտպանական ուժերին՝ որպես ազատամարտիկ և բուժաշխատող: Ընդգրկվելով «Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդի կազմ, նրանք (Կարինե Հովսեփյան, Մելսիդա Հարությունյան, Մարիետա Սարգսյան, Արմինա Նալբանդյան) մասնակից դարձան գնդի վարած ռազմական բոլոր գործողություններին՝ Գորիսի, Սիսիանի, Ստեփանակերտի (Կրկժան), Լաչինի, Քարվաճառի, Շուշիի, Մարտակերտի, Շահումյանի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:[3]

---

[1] *«Ազատ Արցախ», 09.05 2009:*
[2] *Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ. հանրագիտարան, 2004թ. Երևան, էջ 277-290*
[3] *Նույն տեղում:*

Արժանավայել հաղթահարելով պատերազմի ծանր փորձությունը, նրանք սատար կանգնեցին մարտական ընկերներին և փրկեցին բազմաթիվ վիրավոր ազատամարտիկների:

Պատերազմը հաղթական ավարտին հասցնելու և նորաստեղծ հանրապետության կայացման գործում առանձնահատուկ նշանակություն ունեն Շուշիի ազատագրումը և շրջափակման ճեղքումը: Այդ կարևոր իրադարձությունների բովում հայտնված կանանց (Անուշ Ավագյան, Հասմիկ Բաղդասարյան, Մանուշակ Սարգսյան, Ֆլորա Հակոբջանյան, Զուխրա Հայրապետյան, Սվետլանա Աբրահամյան, Տանյա Առստամյան, Մելսիդա Հարությունյան, Աղավնի Սահակյան, Համեստ Օհանյան, Շուշանիկ Աբրահամյան), մասը որպես ազատամարտիկ միացան ինքնապաշտպանական ջոկատներին, իսկ մի մասը կամավոր համալրեց բժշկական ջոկատը, որն ուներ մի նպատակ՝ վիրավորներին ցուցաբերել առաջին բժշկական օգնություն հենց մարտի դաշտում:

1992-ի մայիսի 7-ի գիշերը սկսվեց Շուշիի ազատագրման ռազմագործողությունը: Երկու օրվա մեջ հայ ռազմարվեստի փայլուն դրսևորման և ազատամարտիկների անկոտրում կամքի շնորհիվ ազատագրվեց Շուշի բերդաքաղաքը, որին մասնակցեցին նաև կին ազատամարտիկները:

Հարկ է նշել հայ կամավորական ուժերի՝ «Արծիվ 24» գումարտակի (Նունե Աբրահամյան, Անահիտ Լոպոյան), «Գարեգին Նժդեհ» (Զարուհի Բաղալյան), էջմիածնի (Հեղինե Բդոյան, Մարիետա Քալաշյան), «Մայիս» (Գալյա Գյուրջյան, Լորետա Գյուրջյան), Ղազանչիի (Ալվարդ Շեկյան), Ուխտաձորի (Էլլա Խաչատրյան), Հադրութի (Մելանյա Սաֆարյան, Էմմա Թունյան, Ժենյա Մովսիսյան, Սվետլանա Զավադյան, Լյուդմիլա Մայիլյան, Մանյա Գրիգորյան, Մարինե Բաղդասարյան), Փրջամալի (Նոյեմզար Սարաջյան), Թաղասեռի ջոկատի (Էլլա Գասպարյան), Բալուջայի (Վալյա Վանեսյան, Զոյա Դանիելյան), Խրամորթի (Լենա Շամիրյան), «Ադանա» (Ալվարդ Կոստանդյան), «Սիսակ» (Մարիետա Խաչատրյան), «Տոռոզյան» և «Նաիրի» (Սուսաննա Կոստանդյան), «Անահիտ» (Անահիտ Մարտիրոսյան), «Մխիթար սպարապետ» (Արևհատ Մարտիրոսյան), «Աղբյուր Սերոբ» (Նաիրա Սահակյան), «Եղնիկներ» (Արմինա Նալբանդյան), Ստեփանակերտի կոնդենսատորների (Վարդուհի Գևորգյան), «Աշոտ Երկաթ» (Անահիտ Վարդանյան), «Խաչակիրներ» (Անժելա Զալյան), «Վահրամ Պահլավունի» (Արմինե Սանթրոսյան), «Կարս»

(Նվարդ Դուդուրյան), Արմավիրի (Լոլիտա Վարդանովա), Սևանի (Անժելա Հակոբյան) և «Զորավար Անդրանիկ» (Մարիետա Սարգսյան) ջոկատների կազմում ընդգրկված կանանց մասին, որոնք պատերազմի ողջ ընթացքում մասնակցեցին բոլոր ռազմագործողություններին: Նրանց անմիջական մասնակցությամբ ջոկատները իրականացրեցին ԼՂՀ Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Քաշաթաղի, Քարվաճառի, Աղդամի, Շուշիի, Ասկերանի, ինչպես նաև ՀՀ Արարատի (Երասխ), Վայքի (Բարձրունի), Գորիսի (Կոռնիձոր, Շուռնուխ), Կապանի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերը:[1] Նրանք որոշակի դերակատարություն ունեցան պատերազմի ողջ ընթացքում: Մարտի դաշտում հերոսացան ու առավել ևս՝ իրենց ներկայությամբ հերոսության մղեցին տղամարդկանց: Նրանցից ոմանք զոհվեցին (Նունե Աբրահամյան՝ «Արծիվ-24» գումարտակից, Հեղինե Բոյադյան, Մարիետա Քալաշյան, Ռուզաննա Եսայան՝ էջմիածնի կամավորական ջոկատից, Անժելա Զալյան՝ «Խաչակիրներ» ջոկատից, Նաիրա Սահակյան՝ «Աղբյուր Սերոբ» ջոկատից, Լոլիտա Վարդանովա՝ Արմավիրի ջոկատից) և վիրավորվեցին (Մելսիդա Հարությունյան՝ «Մեծն Տիգրան» ջոկատից, Անահիտ Մարտիրոսյան՝ «Անահիտ» ջոկատից) Արցախյան ազատամարտում՝ անձնական օրինակով ապացուցելով, որ հայ կինը կարող է լինել նաև հայրենիքի զինվոր:

1992թ. դրությունը ռազմաճակատում շարունակում էր մնալ ծայրահեղ լարված: Այդ ընթացքում (օգոստոսի 15-ին) ստեղծվեց ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեն (ՊՊԿ), որի նախագահ նշանակվեց Ռոբերտ Քոչարյանը[2]:

Պատերազմական գործողությունների պայմաններում իշխանության նմանօրինակ կենտրոնացումը մեկ մարմնի մեջ արդարացված էր: Իր ստեղծման առաջին իսկ օրվանից ՊՊԿ-ն եռանդուն քայլեր ձեռնարկեց բանակը կազմակերպական տեսանկյունից մի կուռ համակարգի վերածելու ուղղությամբ: ՊՊԿ նախագահի հրամանագրով ԼՂՀ տարածքը բաժանվեց վեց պաշտպանական շրջանների:[3]

Օրվա պահանջներին համապատասխանեցվեցին պաշտպանական շրջանների մարտական կազմն ու կառուցվածքը, որտեղ ներկա էին նաև

---

[1] *Նույն տեղում:*
[2] *«Մարտիկ», 26 հունվարի-1փետրվարի, 1995 :*
[3] *Բալայան Վ., նշվ.աշխ. էջ318:*

կանայք: Համալրելով Կենտրոնական պաշտպանական շրջանի տարբեր ստորաբաժանումները՝ կին-ազատամարտիկները և կին-բուժաշխատողները (Նունե Աթայան, Ստալինա Ասրյան, Անուշ Ավագյան, Ֆլորա Հակոբջանյան, Զուխրա Հայրապետյան, Անյա Հակոբյան,Վալյա Մեհրաբյան, Արինա Գրիգորյան, Ալվարդ Բաղդասարյան, Էյլա Աղաջանյան, Լյուդմիլա Սարինյան, Էլմիրա Աղայան, Սվետլանա Գրիգորյան, Էլմիրա Առաքելյան, Ալվինա Խաչատրյան, Ժենյա Հարությունյան, Գայանե Պողոսյան, Վալյա Հակոբյան, Ժաննա Նասիբյան, Մարինա Մարտիրոսյան, Գայանե Ավետիսյան, Աիդա Բաղալովա, Մանյա Պետրոսյան, Մարինե Պետրոսյան, Կարինե Պետրոսյան, Անժելա Գալստյան, Լյուդմիլա Օվչարենկո, Լիանա Աբրահամյան, Հասմիկ Առաքելյան, Նաիրա Գևորգյան, Ելենա Թարխանյան, Էմմա Սարգսյան, Ռայա Գրիգորյան, Վերա Թևոսյան, Անահիդա Աբրահամյան, Ստելա Բաղասյան, Սոնյա Մարտիրոսյան) նույնպես մասնակից դարձան 1992-1994թթ. տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերին՝ հյուսիսային ուղղությամբ կազմակերպված հակահարձակողական ռազմական գործողությանը, Քելբաջարի ռազմական հենակետի վնասազերծմանը, Մարտակերտի, Աղդամի ռազմական գործողություններին, ինչպես նաև Հորադիզի, Զանգելանի, Օմարի լեռնանցքի ռազմական գործողություններին[1]:

Ամբողջ ռազմական գործողությունների ընթացքում կանայք ևս իրենց պատասխանատու են զգացել երկրի համար ճակատագրական օրերին, և նույնպես Կենտրոնական պաշտպանական շրջանն ունեցավ զոհեր (Անուշ Ավագյան, Ստալինա Ասրյան) կանանց շարքերում:

1993-ի փետրվար-մարտ ամիսներին մարտական գործողությունները նոր թափով վերսկսվեցին Մարտակերտի շրջանի տարածքների հետագա ազատագրման և Ադրբեջանի զինված ուժերի Լաչին-Քելբաջարյան խմբավորման ջախջախման ուղղությամբ: Հայկական ուժերի ճնշման տակ հակառակորդն ստիպված էր թողնել Լաչինի և Քելբաջարի տարածքները: Այդ ժամանակ Հադրութի և Մարտունու պաշտպանական շրջանների զորամասերը, դիմագրավելով հակառակորդի կողմից ձեռնարկված հարձակման բոլոր փորձերը, անցան հակահարձակման, որի ընթացքում էլ հաջողություններ արձանագրվեց, որի ընթացքում բանա-

[1] *ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ.2, ց.1, գ.1, պմ1, թ.1-3: Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ. հանրագիտարան, էջ277-290:*

կային ստորաբաժանումներում ծառայող կանայք նույնպես ոչ պակաս կարևոր դեր ունեցան:

Կարևոր է հիշատակել Հադրութի և Մարտունու պաշտպանական շրջանների կազմում ծառայող կանանց մասին, որոնք որպես ազատամարտիկ և բուժքույր ստորաբաժանումների կազմում մասնակցեցին մի շարք ռազմագործողությունների՝ Մարտակերտի, Աղդամի, Լաչինի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:[1]

Մարտի դաշտում նրանց պահվածքը հիացմունք ու պաշտամունքի հասնող պատկառանք էին առաջ բերում, ինչը բարձրացնում էր նրանց բարոյական ոգին: Կանանց ներկայության շնորհիվ ստեղծվում էին զինվորական կոլեկտիվներ՝ ընդունակ կատարելու ամենադժվար մարտական առաջադրանքները:

Դեպքերից առաջ ընկնելով, նշենք, որ Արցախի համարյա բոլոր գյուղերում նախապատերազմյան շրջանում ձևավորված ինքնապաշտպանական ջոկատներ ընդգրկվելուց բացի, կանայք նաև մեծ ակտիվությամբ զբաղվում էին գյուղատնտեսությամբ՝ սնունդ մատակարարելով ինքնապաշտպանական ջոկատներին: Նման ընթացքը շարունակվեց նաև պատերազմի ողջ ընթացքում: Այդ ծանր տարիներին դիմացավ հայ կինը՝ իր ուսերի վրա տանելով անասելի դժվարություններ:

Պատասխանատվությամբ և պատրաստվածությամբ էին ծառայում Ասկերանի, Մարտակերտի պաշտպանական շրջանների կազմերում ընդգրկված կանայք:

Ռազմական գործողությունների ողջ ընթացքում Ասկերանի պաշտպանական շրջանում ընդգրկված կանայք (Թամարա Նազարյան, Տանյա Առստամյան, Ալլա Արզումանյան, Սվետլանա Հովսեփյան, Գայանե Գաբրիելյան, Լյուդմիլա Մելքումյան, Քանաքարա Ղարայան, Ռոզա Հարությունյան) մասնակցեցին զորամասերի մարտական գործողություններին՝ Ասկերանի, Շուշիի, Մարտակերտի, Աղդամի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Նույն ոգով էին կանայք ծառայում նաև Մարտակերտի պաշտպանական շրջանում (Գայանե Մարգարյան, Լիանա Մկրտչյան, Արևիկ Սարգսյան, Սվետլանա Աբրահամյան,

[1] *ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ.2, ց.1, գ.1, պմ1, թ.1-3: Մանյա Գրիգորյան, Մարիետա Քալաշյան, Ալվարդ Աբալյան, Արեգա Առստամյան, Իրինա Գրիգորյան, Էլեոնորա Աղաբեկյան, Ալինա Նասիբյան, Ռոզա Մուսայելյան, Առլետա Ազիզյան, Անժելա Արզումանյան, Ռիտա Այդինյան, Մեդա Բաբայան, Թամարա Բալայան, Արեգա Բաբայան, Արզելա Բալայան, Լաուրա Խալափյան, Միլվա Բալայան, Անժելա Ջամալյան, Վերա Հարությունյան, Մարգո Ազարյան, Մելանյա Սարգսյան, Հասմիկ Օհանջանյան, Ռայա Ավագյան:*

Վալյա Պետրոսյան, Գայանե Մեժլումյան, Թամարա Աբրահամյան), որոնք ևս մասնակցեցին պաշտպանական շրջանի վարած բոլոր մարտական գործողություններին՝ ԼՂՀ հյուսիսային տարածքների ազատագրմանը:[1] Նրանց շարքերում եղան զոհեր (Գայանե Մարգարյան՝ Մարտակերտի պաշտպանական շրջան, Քանաքարա Ղարայան, Ռոզա Հարությունյան՝ Ասկերանի պաշտպանական շրջան) և վիրավորներ (Թամարա Նազարյան՝ Ասկերանի պաշտպանական շրջան, Թամարա Աբրահամյան, Գայանե Մեժլումյան՝ Մարտակերտի պաշտպանական շրջան):[2]

Նման հերոսուհիներ ծնեց Արցախյան հերոսամարտը, որոնք եկան համալրելու նվիրյալների շարքը և հայրենիքի համար օրհասական պահին զենք վերցնելով՝ կանգնեցին ազատամարտիկների շարքերում:

Ազատամարտում առանձնակի եռանդ ցուցաբերեցին նաև զինվորական հոսպիտալի կին բուժաշխատողները: Ժամանակի թելադրանքով 1992-ի հունվարին ստեղծվեց կամավոր բուժաշխատողների խումբ (հիմնադիր՝ Վ.Մարության): Նրանք սկզբում թվով մի քանի տասնյակի էին հասնում և քաղաքացիական բժշկությունից միանգամից ոտք դրեցին ռազմական բժշկության ասպարեզ: Այնուհետև ստեղծվեցին ռազմադաշտային շարժական հոսպիտալներ, որոնք հետևում էին ինքնապաշտպանական ուժերին, իրագործում բուժօգնությունը դաշտային պայմաններում: Հոսպիտալների կին-բուժաշխատողները (Անժելա Հարությունյան, Լիդա Աղաբեկյան, Սվետլանա Աբրահամյան, Արևիկ Անդրյան, Արմիդա Ավանեսյան, Ալվարդ Բաղդասարյան, Անժելա Գրիգորյան, Անյուտա Թադևոսյան, Զուլիետա Խաչատրյան, Գայանե Հայրապետյան, Անժելա Հարությունյան, Աիդա Ղուլյան, Գայանե Տոնոյան, Համեստ Օհանյան, Ռոզա Դադայան, Օֆելյա Սարգսյան, Ժենյա Առստամյան, Թամարա Դանիելյան, Էմմա Աբրահամյան, Հայրիյան Զուլիետա, Գայանե Տոնյան, Գյուլչորա Գևորգյան, Նաիրա Իսրայելյան, Լյուդմիլա Իզմալյան , Ռայա Գրիգորյան) պատերազմի տարիներին անհնարինը դարձնում էին հնարավոր՝ փրկելով հարյուրավոր զինվորների կյանքեր: Մարտական գործողությունների ամենավճռական ու թեժ պահերին նրանց մասնակցությամբ դաշտային հոսպիտալներում կատարվում էին բարդ վիրահա-

---

[1], «Ազատ Արցախ», 04.05 2003:

[2] ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ.2, ց.1, կապ1, պմ1, թ.1-3: Վարդումյան Հ. , Ճշվ.աշխ, էջ14-152:

տություններ: Կանանց անմիջական մասնակցությամբ ստեղծվեցին երեք բաժանմունքներ՝ վերակենդանացման, վիրահատման, վիրակապման: Ընդ որում, այդ բաժանմունքները Կենտրոնական զինվորական հոսպիտալի կայացման գործում առանցքային նշանակություն ունեցան[1]:

Ազատամարտի տարիներին հայկական ինքնապաշտպանական ուժերի կողմից շարունակ մշակվում և իրականացվում էին ոչ սանդարտ բնույթի մարտական ռազմագործողություններ, որոնք շատ հաճախ շփոթ և խուճապ էին առաջացնում հակառակորդի ճամբարում:

1993-ի օգոստոսին ռազմական գործողությունները նոր թափով վերսկսվեցին: ԼՂՀ Պաշտպանության բանակը ոչ միայն կասեցրեց թշնամու հարձակումը, այլև սրընթաց գրոհով շրջափակման մեջ առավ ադրբեջանական խմբավորումները (Հորադիզ): Այսպես աշնանային զորաշարժի ժամանակ ազատագրվեց դարերի ընթացքում հայ ժողովրդից այս կամ այն ճանապարհով խլված պապենական հողերի մի հատվածը: Իրանի և ԼՂՀ-ի միջև Արաքս գետը դարձավ միջպետական սահման:

Հարկ է նշել, որ հայկական ուժերը, հակահարձակման անցնելով նախկին ԼՂԻՄ հարակից շրջաններում, նպատակ ունեին ԼՂՀ-ի համար ստեղծել անվտանգության գոտի: Քննարկելով ռազմական գործողությունների ընթացքը, տեսնում ենք, որ ամեն անգամ մի նոր շրջան էր ազատագրվում՝ ադրբեջանական գրոհները կասեցնելուց և պատասխան գործողություններ իրականացնելուց հետո: Ռազմավարական նշանակության շրջաններն ազատագրելով՝ ապահովվեց խաղաղ բնակչության անվտանգությունը: Այստեղ ևս արժե անդրադառնալ այն կանանց, ովքեր ամբողջ այս իրադարձություններին եռանդուն, անձնվեր մասնակցություն ցուցաբերեցին:

Քննարկելով կանանց մասնակցությունը ռազմական գործողություններին, հարկ է հիշել նաև նրանց, ովքեր լրացրին ազատագրական պայքարի ելած կամավորների շարքերը և որոնց մարտական ուղին անցավ մի քանի կամավորական ջոկատների, տարբեր գնդերի հետ: Նրանք (Ժենյա Սարոյան, Անուշ Տեր-Թալյան, Կարինե Գևորգյան, Աղավնի Սահակյան, Շուշանիկ Թամրազյան, Աղավնի Տեր-Ստեփանյան, Կարինե Աղաբեկյան, Նազիկ Ամիրյան, Ալվարդ Վարդանյան, Նարինե Առաքելյան, Հեղինե Բդոյան, Մարիետա Սարգսյան, Կարինե Աղեկյան, Սվետլա-

[1] «Մարտիկ», 13-20.01.2012:

նա (Լենա) Ավագյան, Սվետլանա Եսայան, Շուշանիկ Թահմիզյան, Հեղինե (Զեմմա) Հովհաննիսյան, Ելենա Մարտիրոսյան, Աիդա Սերոբյան, Նարինե Սահակյան, Ալվարդ Վարդանյան, Արմինե Սարգսյան, Գոհար Դունամալյան, Վեհանուշ Այվազյան, Հերմինե Հյարապետյան) հայտնվում էին այնտեղ, որտեղ հարկավոր էր լարել ողջ ուժերը, գերմարդկային կարողություններ ձեռք բերել՝ հասցնել կատարելու ծանր ու պատասխանատու գործը: Գնում էին առաջին գիծ ոչ միայն որպես ազատամարտիկ, այլ նաև բուժքույր և դաշտային պայմաններում ցուցաբերում առաջին օգնությունը: Նրանք ևս մասնակցեցին Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի, Աղդամի, Լաչինի, Հադրութի, Քելբաջարի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Անցնելով ամբողջ ռազմաճակատի երկայնքով, ունեցան զոհեր (Աղավնի Սահակյան, Աղավնի Տեր-Ստեփանյան, Ալվարդ Վարդանյան, Նարինե Առաքելյան, Հեղինե Բդոյան, Մարիետա Սարգսյան) և վիրավորվեր ներ (Ժենյա Սարոյան, Կարինե Աղեկյան)[1]:

1993թ. նոյեմբերի 29-ից սկսած, ռազմական բոլոր հատվածներում՝ Օմարի լեռնանցքից մինչև Արաքսի ափերը, ադրբեջանցիները վերսկսեցին մարտական գործողությունները և մինչև 1994թ. հունվարի կեսերը որոշակի հաջողություններ ունեցան: Սակայն փետրվարի երկրորդ կեսին սկսվեցին հակառակորդի քելբաջարյան խմբավորման ոչնչացման ռազմագործողությունները: Ադրբեջանի ձմեռային արշավանքը ձախողվեց, որն էլ ստիպեց հարևան հանրապետության ղեկավարներին նստել բանակցությունների սեղանի շուրջ: Նոր տարածքներ կորցնելու վտանգը իրական ու շոշափելի էր:

1994թ. մայիսի 5-ին ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի միջնորդությամբ Կիրգիզիայի մայրաքաղաք Բիշքեկում ԱՀ-ն, ՀՀ-ն և ԼՂՀ-ն ստորագրեցին հրադադարի մասին համաձայնագիր[2]:

Այսպես, ԽՍՀՄ և միջազգային իրավական նորմերի շրջանակներում հռչակված պետության՝ ԼՂՀ նկատմամբ 1991թ. վերջերից Ադրբեջանի կողմից սանձազերծվեց լայնամասշտաբ զավթողական պատերազմ, որը ոչ միայ վտանգեց ԼՂՀ գոյությունը, այլև դրեց արցախահայության լինել-չլինելու հարցը: Արցախահայությունը, ի մի բերելով իր ներուժը, Հայաստանի Հանրապետության և սփյուռքահայության աջակցությամբ իրեն

[1] «Մարտիկ», 1-8.04.2006:
[2] Բալայան Վ., նշվ.աշխ. էջ327:

պարտադրված պատերազմում հասավ հաղթանակի: Այս ամենին մասնակից դարձան իարյուրավոր կանայք: Նրանք ևս գիտակցում էին, որ տեսականորեն անհնար էր դիմակայել հակառակորդի ահռելի ուժերին, որի համար էլ դեռևս նախապատերազմյան տարիներին կամավոր միացան հայ ինքնապաշտպանական ուժերին: Իրենց անկասելի ոգով մեկնեցին ռազմաճակատ՝ որպես ազատամարտիկ ու բուժքույր և իրենց նվիրեցին հայրենիքի պաշտպանությանը:

Ամփոփում

Հոդվածում լուսաբանվում է կանանց մասնակցությունն արցախահայության ազգային-ազատագրական պայքարի պատերազմական փուլին՝1991-1994թթ

Այն պահից սկսած, երբ Արցախյան շարժումն ընդհատակյա բնույթ էր կրում, կանայք մասնակիցը դառնալով այդ ամենին, ընդգրկվելով նախաձեռնող խմբերում, նպաստեցին, որպեսզի շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի:

1991 թվականի նոյեմբերից Ադրբեջանը գինված ագրեսիա սանձազերծեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ: Արցախահայությունը ստիպված էր դիմել կազմակերպված ինքնապաշտպանության:

Ինքնապաշտպանական մարտերի մասնակից դարձան նաև հարյուրավոր կին-կամավորականներ՝ տղամարդ ազատամարտիկների հետ համահավասար կիսելով պատերազմի բոլոր դժվարությունները:

Участие женщин в военном этапе национально-освободительной борьбы армянства Арцаха(1991-1994гг.)

Искуи Аванесян

Резюме

Ключевые слова- женщины, общенациональный, самообороны, способствовать, борьба, освобождение, независимость, победа, ранены, жертв.

В статье освещается участие женщин в военном этапе национально-освободительной борьбы армянства Арцаха в1991-1994гг.

Начиная с того момента, когда Карабахское движение пока еще несла подпольный характер, женьщины не только стали участниками всех происходящих событий, но и включаясь в работу Инициативных групп, способствовали, чтобы движение переросло в общенациональную борьбу.

С ноября 1991г. Азейрбаджан развернул вооруженную агрессию против Нагорного-Карабахской Республики. Армянство Арцаха вынужден был прибегнуть к организованной самообороне.

Участниками боев самообороны стали также сотни женщин, на равне с мужчинами-войнами разделяя все тяготы войны.

Participation of women in the military phase of the national-liberation struggle of the Armenians of Artsakh (1991-1994)

Iskuhi Avanesyan

Summary

Key Words *– women, nationwide, self-defense, promote, struggle, liberation, independence, victory, wounded, victims.*

The article highlights the participation of women in the military phase of the national-liberation struggle of the Armenians of Artsakh throughout 1991 and 1994. Women have participated in spontaneous underground movements since their very beginnings, not just as participants to their formative events, but as leaders and initiators who helped grow the movement into a nationwide struggle. In November 1991, Azerbaijan unleashed armed aggression against the Republic of Nagorno-Karabakh. The Armenians of Artsakh had to resort to organized self-defense.

Hundreds of women-volunteers also participated in self-defense fights sharing all the hardships of war together with men fighters.